

ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ՄԵԾ ԲԱՌԱՐԱՆԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՊՐԱԿԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

1952 թ. հունվարի 29-ին, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նիստերի ղահլիճում տեղի ունեցավ Հեղվի ինստիտուտի կողմից կազմակերպած Ռուս-հայերեն մեծ բառարանի փորձնական պրակի հրապարակային քննարկումը: Հայկական ՍՍՌ ԳԱ Խակ-կան անդամ, Հեղվի ինստիտուտի ղիրեկտոր ընկ. Գո. Ղափանցյանը իր ներածական խոս-քում ասաց, որ Ռուս-հայերեն մեծ բառարանը կազմողները իրենց աշխատանքի ընթաց-քում հետևել են ուսումնական լավագույն բառարանագետներին, հատկապես Ուշակովին:

Ռուս-հայերեն մեծ բառարանի մասին հասարակական կարծիք ստեղծելու համար Հեղվի ինստիտուտը մեկ մամուլ ծավալով հրատարակեց փորձնական պրակ, որի մասին ղիտոդոլթյուններ են ստացվել Մոսկվայից, Լենինգրադից, Կիևից, Մինսկից, Բաքվից, Թբիլիսիից, Երևանից և այլ տեղերից:

Ռուս-հայերեն մեծ բառարանի փորձնական պրակի մասին ստացված ղիտոդոլ-թյունների հաղորդմամբ հանդես եկավ Հեղվի ինստիտուտի բառարանագրական սեկտորի վարիչ, ֆիլ. գիտ. ղոկտոր-պրոֆ. էդ. Աղայանը: «Դիտոդոլթյունների առաջին մասը,—ասում է ընկ. Աղայանը,—վերաբերում է տերմիններին: Ոմանք առաջարկում են քաղաքական, գի-տական բառերի համար տալ միայն նրանց ընդունված տերմինները՝ առանց հոմանիշների: Ռուս-հայերեն մեծ բառարանը տերմինաբանական բառարան չէ, ուստի բառարանում անհրաժեշտ է ընդունված ղիտական տերմինի ղիմաց տալ նաև նրա հոմանիշները, օր. ԾԱՅՁԵՐ քաղալու, սեակուճ: Որոշ տերմիններ այժմ երկու կերպ են գործածվում: Եթե Ակադեմիայում ընդունված է ասել «աշխարհագրոլթյուն», «երկրաշափոլթյուն», «երկրաբա-նոլթյուն», «կենսաբանոլթյուն», և այլն, ապա համալսարանում ասում են «գեոգրաֆիա», «գեոմետրիա», «գեոլոգիա», «բիոլոգիա» և այլն, կամ հայերեն միևնույն գիտական տեր-մինի համար կա երկու բառ «գլխոլղեղ» և «գանգոլղեղ»: Այսպիսի ղեպքերում պետք է ճշ-տել, թե որն ընդունել:

Դիտոդոլթյունների երկրորդ մասը վերաբերում է բառարանի մեծ եղած օրի-նականներին:

Մեր բառարանի օրինականների տեսակետից թեև առաջ է անցել Ուշակովից, բայց եղած օրինականները քիչ են արտահայտում մեր այսօրվա իրականոլթյունը, կոմունիզմի ղարաշրջանը: Շատ քիչ են կամ համարյա չկան սովխտական գրողների երկերից հանած օրինականներ:

Դիտոդոլթյուններ կան ղանազան մասնագիտոլթյունների վերաբերյալ պայմանա-կան հապավումների մասին: Ոմանք գտնում են, որ այդ պայմանական հապավումները կամ նշումները ղատ-ղատ են և ծանրաբեռնում են բառարանը, սակայն պետք է նկատի ունենալ, որ Ուշակովի բառարանը ավելի ղատ այդպիսի պայմանական հապավումներ ու նշումներ ունի: Այնտեղ գուք ամենասովորական ու ղատ գործածական բառերի մոտ կգրտ-նեք КНИЖ. (գրք. «գրքային»), спец. (մանգ. «մասնագիտական») և այլ նշումներ: Մենք առհասարակ բառն աղատում ենք ավելորդ նշումից, բայց որոշ նշումներ անպայման պետք է պահել:

Դիտոդոլթյուններ կան նաև ղարվածքի մասին. գտնում են, որ ղղատուների հա-մար պետք է գործածել ավելի պարզ ու ընթեռնելի ղրիֆտ:

Մրանք են փորձնական պրակի մասին եղած ղիտոդոլթյունները:

Ընկ. էդ. Աղայանի ղեկուցման առթիվ ղիտոդոլթյուններով հանդես եկան ընկեր-ներ Վ. Ավետիսյանը (ԻՄԷԼ-ի ղիրեկտոր), Հ. Ասլանյանը (ԻՄԷԼ), Դ. Դեմիրճյանը—(Գրող-ների միոլթյուն), Վ. Տոնյանը (Ակադեմիայի մաթեմատիկայի սեկտոր), Ս. Բաբայանը («Մոլետ. Հայաստան»), Վ. Անդրեասյանը (Օտար լեզուների ինստիտուտ), Վ. Միքայելյանը (Պետհրատ. թարգմանիչ), Պ. Նազարյանը (ԻՄԷԼ, թարգմանիչ), Հ. Համբարձումյանը (Ռուս-հայերեն մեծ բառարանի հեղինականներից) և Խ. Վեմյանը (Հեղվի ինստիտուտ): Բոլոր ելույթ

ուսնեցողները շեշտում են Ռուս-հայերեն մեծ բառարանի խոշոր գիտական նշանակությունը ու անհրաժեշտությունը:

Ընկ. Վ. Ավետիսյանն իր ելույթում անում է մի շարք կարևոր գիտողություններ: 1) Հայերեն մի շարք բառեր, որոնք հնացած են, բառարանում պետք է տրվեն հատուկ նշումով, այդպիսի հնացած բառեր են, օրինակ՝ ВЫПУСКНИК բառի թարգմանության մեջ «ընթացավարտ»-ը, базальт բառի մեջ՝ «սևակուճր» և այլն: 2) Բառարանում կան թիված բառեր, օր. նավագնացություն (абортация), անդրածին (абортинген), հատոն (абиссеса) և այլն: 3) Ռուսերենից կամ օտար լեզվից հայերենի մեջ մտած բառերի նկատմամբ պետք է կիրառել հետևողականություն: Բոլոր դեպքերում առաջին տեղը պետք է տալ կամ օտար բառին, կամ հայերենին և ոչ թե մեջընդմեջ մեկ հայերենին, մեկ օտար բառին: Որոշ բառեր, որոնք հայերեն չեն թարգմանվում, պետք է վերցնել ռուսական ձևով: Տերմինների միօրինակություն ստեղծելու համար պետք է խուսափել տվյալ տերմինի համար բազմաթիվ հոմանիշներ գործածելուց:

Ընկ. Հ. Ասլանյանն իր ելույթում ասաց, որ բառերի բացատրությունը տալու գործում միայն Ուշակովի բառարանով ղեկավարվելը քիչ է. շատ հասկացությունների, տերմինների բացատրությունները պետք է ճշտվեն ու լրացվեն մարքսիզմի կյանքիների օրինակներով: Պետք է կազմել նոր բառերի, հասկացությունների, տերմինների ցուցակ, որոնք Ուշակովի բառարանում չկան: Բառարանում ճիշտ չի տրված базис-ի բացատրությունը: Նրբություններ կան, որ բառարանում բացակայում են: Ռուսերեն բառի թարգմանության ընթացքում առաջնությունը պետք է տալ ամենատարածված, ամենագործածական ձևերին, ապա մյուս բառերին:

Ընկ. Դ. Բեսիդնյանն իր ելույթում շեշտեց, որ գիտողություններ անելիս պետք է ելնել մեր այսօրվա իրականությունից: Մենք չենք կարող Ռուս-հայերեն մեծ բառարանից պահանջել միանգամայն ճշտված գրություններ: Բառարանը գործի տեսակետից կշահի, եթե ռուսերենի թարգմանության գիմաց նախ տրվի հայերեն ընդունված ձևը, ապա մյուսները: Եթե այսպես առաջնորդվենք, այդքան էլ բավական է: Այս բառարանը համեմատած նախորդ նման տիպի շատ այլ բառարանների հետ, մեծ նվաճում է և խոշոր քայլ դեպի առաջ:

Ընկ. Վ. Տոնյանն իր ելույթում փորձնական պրակտիկ վերաբերյալ անում է հետևյալ գիտողություններ:

1) Аббревиатура «հապավում, բարդ հապավված բառ» թարգմանությունից հետո բերված օրինակները պետք է լինեն միայն հայերեն: Օր. «պինկոմ», «ՍՍՌՄ»:

2) Թարգմանության ժամանակ որ բառը առաջ է դրվում, նշանակում է այդ բառն է նախընտրելի և հանձնարարելի: Այստեղ պետք է պահպանել խիստ միօրինակություն և սկզբունքայնություն: Եթե абстрактный թարգմանվում է «վերացական, արստրակտ», հասկացվում է, որ առաջինն է նախընտրելի: Սակայն բերված օրինակների մեջ բոլորովին հակառակն է արված. օր. абстрактное понятие «արստրակտ (վերացական) հասկացություն, абстрактные науки «արստրակտ (վերացական) գիտություններ»:

3) Հայերենի կրավորական «վ»-ն պետք է գործադրել իր շրջանակներում: Եթե մի կերպ հանձնարարելի է, որ абстрагироваться թարգմանվի «արստրահվել», արստրակցիայի ենթարկվել», ապա անթույլատրելի է «արստրակցիա կատարվենք» ձևը:

4) Բառարանում «բացարձակ» և «արսոյուտ» բառերի համար մտցված է յուրօրինակ ֆունկցիաների բաժանում: Հասարակական գիտությունների համար գործածվում է «բացարձակ», իսկ ճշգրիտ գիտությունների համար արսոյուտ: Ինչու «բացարձակ» բառը չկիրառել նաև ճշգրիտ գիտությունների տերմինոլոգիայում, երբ այն գործածվում է այդ գիտությունների մասնագետների կողմից:

5) В двух километрах от города թարգմանված է «քաղաքից երկու կիլոմետր տարածության վրա». կիլոմետրը տարածություն չէ, հետևարար չի կարելի չափել կիլոմետրերով: Կիլոմետրը հեռավորություն է, որ չափվում է երկարության միավորներով: Ուստի և в двух километрах от города պետք է թարգմանել «երկու կիլոմետր հեռավորության վրա» կամ «քաղաքից երկու կիլոմետրի վրա»:

Ընկ. Ս. Բաբայանն իր ելույթում նշում է, որ Ռուս-հայերեն մեծ բառարանում «որոշ բառեր լրիվ չեն թարգմանվել օր. абиссинка, абиссинский, абиссинцы բառերը թարգմանված են «հարեշուհի, հարեշական, հարեշներ, խափշիկներ» բառերով, բաց թողնելով «եթովպացիներ», «եթովպուհի» և «եթովպական» ձևերը, որ անհրաժեշտ են

«հարեշ—շարեշտան» և «եթովպացի—եթովպիա» հասկացությունների նույնությունը նշելու համար: Դա պետք է անել նաև Ефиоп, ефиопейի բառերի թարգմանության մեջ, տալով նաև հարեշ, շարեշտան հասկացությունները, ինչպես նաև նման այլ զեպքերում:

Ընկ. Կ. Անդրեասյանն իր ելույթում ասում է, որ Բառարանը հոգ պետք է տանի հայոց լեզվի ընդհանուր հարստությունը պահպանելու մասին:

Ցանկալի է, որ բոլոր մասնագիտական բառերի համար տրվեն բացատրություններ: Պետք է հատուկ ուշադրություն դարձնել տպագրության շրիֆտը պարզեցնելու վրա:

Ընկ. Վ. Մխչյանյանն իր ելույթում ասում է, որ բառարան կազմողները բացի ընթերցող մասսայից, նկատի պետք է ունենան նաև թարգմանիչներին: Կան շատ նրբություններ, որոնք թարգմանիչները շատ զեպքերում չեն կարող հաղթահարել: Այստեղ բառարանը պետք է օգնության հասնի թարգմանիչին: Ո՞ւմ հասկանալի չէ ձա բառը, բայց երբ մեկը իր վիշաք երկար պատմում է, և լսողը վերջում ասում է ձա ...ինչպես թարգմանել այս ձա-ն: Դան ոճեր, որ չգիտես ինչպես թարգմանես հայերեն, օր. «КРУГОМ МЕСТНАДЦАТЬ»: Այս ոճը չունի ոչ Դալը և ոչ էլ Ուշակովը: Բառարան կազմողները թարգմանիչներին պետք է դուրս բերեն այսպիսի դժվարություններից:

Ընկ. Նազարյանն իր ելույթում ասում է, որ չպետք է խուսափել ուսուցիչներին բառեր գործածելուց: Պետք է ասել «ֆրոնտ», «վակալ», «ստանցիա», «ապանկա», «բազար», «սկլադ», «մագազին», և այլն: Եթե մենք խուսափում ենք այդպիսի բառերից, դրանով մեր լեզուն ենք աղքատացնում:

Ընկ. Հ. Համբարձումյանն իր ելույթում առարկություն է անում բառարանի վերտառության դեմ: «Մեծ» էպիտետը,—ասում է ընկ. Հ. Համբարձումյանը,—ավելորդ է բառարանի համար: Բառարանը որքան էլ մեծ լինի, «մեծ» չպետք է կոչվի: Դալի բառարանը 200 հազար բառ ունի, բայց նա չի կոչվում «մեծ»: Ակադեմիայի նախագահությունն իր որոշումներում միշտ գործածում է «մեծ-հայերեն բառարան»: Բառարանի մեջ,—ասում է այնուհետև ընկ. Համբարձումյանը,—կարելի կլինի կիրառել կլասիկների և սովետական գրողների օրինակները, եթե մեր ձեռքի տակ լինի ուսուց լեզվի լրիվ քարտուտեկան: Ակադեմիական ուսուցիչներն ուսուցիչներն իր տրամադրության տակ ունի հինգ միլիոն քարտ և նա կարող է շատ ազատ կերպով ու ընտրությամբ օգտագործել կլասիկների օրինակները բառարանի մեջ:

Ընկ. Խ. Վեմյանն իր ելույթում ասում է, որ բառարանում մասնագիտական բառերի փակագծերով նշումները կարելի է ավելի սեղմել և դրանով մեծ խնայողություն կատարել: Բառերի թարգմանության մեջ պետք է խուսափել կրկնություններից: Ե՞րբ բացատրության մեջ 25 անգամ գրված է «գործ է ածվում» արտահայտությունը: Բառարանում մեծ տեղ պետք է տալ հոմանիշ բառերին:

Ընկ. Էդ. Աղայանն իր եզրափակման խոսքում ասում է, որ դիտողությունները մի նպատակ ունեն՝ վերացնելու թերությունները: Բոլոր դիտողությունները խմբագրությունը հաշվի կառնի, իսկ ուղղագրության հարցում պետք է պահպանել Տերմինաբանական կոմիտեի որոշումները:

Վերջում ընկ. Գր. Ղափանցյանը ասում է, որ տերմինների գործածության, ուղղագրության և այլ հարցերում եղած բազմաթիվ տարակարծությունների պատճառն այն է, որ Տերմինաբանական կոմիտեն վեց ամիս է ոչինչ չի անում: Եթե Տերմինաբանական կոմիտեն աշխատեր, այսօր որոշ բառերի խնդրում երկընտրանքի առաջ չէինք կանգնի: Բառարանում մասնագիտական բառերի և օտար տերմինների հետ պետք է օգտագործել նաև բարբառներից վերցրած բառեր: Օրինակ՝ ЗАЦЕПИТЬСЯ բառի համար շատ կարևոր է բարբառային «ակոկել» թարգմանությունը: Ինչու մենք չգնանք այն ճանապարհով, ինչ ուսուցիչն են գնում, որոնք իրենց լեզուն հարստացնում են իրենց իսկ ժողովրդի ընդերքում եղած բառերով: Չպետք է մեզ չինական պարիսպներով անջատենք բարբառներից, պետք է օգտագործել բարբառների անհուն զանձը: Այս ժողովն անշուշտ դրական նշանակություն ունեցավ: Եղան իրոք առողջ առաջարկություններ, դիտողություններ, սխալների հայտնաբերում, որոնք խմբագրությունը հաշվի կառնի:

Ա. ՔՈՉՈՑԱՆ

